հիշանը։ Ասոնք էին նաեւ Թոմա պատրիարքին հակառակորդներն ու անոր մահուան պատճառները, և ասոնցմէ դարձեալ ծայր կու տայ Եղիազարեանց ու Թլիթըլեանց հոչակաւոր վէճը պատրիարքական։

Տասն և եօթներորդ դարուն այդ մեծերուն մէջ է նաեւ ներքուստն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան, բարեկամն Այնթապցի Եղիազար կաթողիկոսին, նոտար և գրագէտ ու մատենագիր մեծատունն՝ երեց եղբայրը Տէր Կոմիտասի[1], որ և նախ Սամաթիայի Ս. Գէորգ եկեղեցիին աւագ սարկաւագն էր, և վախճանեցաւ 60 տարեկան 1695ին։ Գրած է հինգ գիրք պատմութիւն Օսմանեան թագաւորութեան ընդարձակ, Գիրք մը՝ անոր համառոտութիւնը, միւս Գիրք մը ոտանաւոր՝ Յակոբ կաթողիկոսի խնդրելովը, Աղեքսանդրի պատմութիւնը՝ նոյնպէս ոտանաւոր. թարգմանած է Թուրքերէնի՝ խորհնացիին քաղուածներ. գրած է՝ դերման դեսպանին խնդրելովը՝ պարսկական, հնդկական և Փոքր Ասիայի աշխարհագրութիւններ. Գիրք մը ընդէմ Հրէից, Քարոզներ, մասնաւորապէս՝ հայերէն տաճկերէն. պատմութիւն Երուսաղէմի, թարգմանած է Թուրքերէնի՝ Աւետարանն և ինչ ինչ կտորներ Հին կտակարանէն. թարգմանած է յունարէնէ ու լատիներէնէ գիրքեր. տպագրել տուած է իր հակողութեամբն երկու հատոր Գիրք — Մնացորդք Յիսուս որդւոյ, և Տնօրինական տեղիք. գրած է ժամանակակից խնդիրներուն վրայ՝ ընդարձակ նամակներ առ կաթողիկոսս և պատրիարքունս, նաեւ յորդորականներ, տեղեկագիրներ ու յիշատակարաններ վանքերու վարչութեանց և արտունութեանց վրայ, ճանապարհորդած է Փոքր Ասիայի շատ քաղաքներն ու գիւղերը, ինչպէս նաեւ՝ Պէրութ, Բերիա, Երուսաղէմ, Արմաշ, և այլն։ Գրած է նաեւ ստուգութեամբ իր ժամանակին պատմութիւնը, որմէ Զամչեան առած է շատ բան. մենք շատ փնտռած ու հարցուցած ենք իր այս գործերն ու չենք գտած. նոյն իսկ ամէնէն բազմահմուտ անձերու քով և ամէնէն բազմահատոր մա-

1. Տէս Զամչեան հատ. Գ։ Եւ վարք Տ. Կոմիտասի, էջ 9–10։